ՆՈՐ-ԴԱՐ

№ 81 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 21 Մայիսի 1885 Երեքշաբթի 21 Մայիսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 81

Տարեկան 10 բոքլի. վեց ամիսը՝ 6 բոլբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ.
Հասցով 5 կոպեկով։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միայն կամքայտառներում։

Խմբագրությունն հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Հայտարարությունները ընդունվում են ամեն ներսիններից։
Հայտարարությունների բառին 2 կ., բնկալվածների համար սկզբնատառիկ։

Բաժանորդագրությունը շարունակվում է։ «Նոր-Դար»-ի բաժանորդագինը մայիսի 1-ից մինչև տարեվայ վերջը—7 բ. 25 կ. է։

Հասցեների փոփոխության համար վճարում են երեք հատ երեք կոպեկանոց մարկաներ։

Թերթը ամսաթանգում ստացող բաժանորդները վճարում են 80 կոպ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցություններ.—Ախալքալաք։ Մեծ-Սատա գիւղ։
Քաղաքական.—Ռուս-անգլիական վէճը։ Իտալիա։ Լուրեր։
Խառնլուրեր։
Հեռագիրներ։
Յայտարարություններ։
Բանասիրական.—Մերսեդես։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ի նկատի ունենալով խոլերայից սպառնացող վտանգը զինուորական մինիստրությունը կարգադրեց գաւառական բժիշկներին օգնություն ուղարկել բժշկական բարձր կուրսերի ուսանողներին։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ։—13-ին գիշերուայ ժամի 1-ին Ռոստովո-Վորոնէժեան երկաթուղու Ճանապարհական գնացքը Նախիջևանի մօտ դուրս եկաւ գծից և շոգեմեքենան խրուեցաւ հողի մէջ։ I և II կարգի վագոնները անվնաս ազատուեցան, իսկ III կարգինը՝ բոլորը ջարդուեցան։ Սպանուածների և վիրաւորուածների թիւը հասնում է 200-ի։ Վիրաւորուածներից հազիւ թէ 10% առողջանան։ Ռոստովի և Նախիջևանի բնակիչները չուտով հաւաքուեցան այդ եղեռնական անցքին ականատես լինելու. անկարելի է նկարագրել այդ տեսարանի ցաւալի դրութիւնը։ Ասում են, որ դժբաղդ դէպքի պատճառը չարագործներն են, որոնք Ճանապարհորդներին կողոպտելու նպատակով գծի վրայ փայտեր և քարեր են կուտել։ Ընդհանուր տխրութիւն է տիրապետում քաղաքիս բնակիչների վրայ։

Այստեղ շոգերը արդէն սկսուած են, առևտուրը ընկած է։

—

«Харк. Губ. Вѣд.» լրագիրը պատմում է հետևեալ զզուելի և եղեռնական դէպքի մասին, որը ամսիս 3-ին տեղի է ունեցել Նիգալս գիւղում, Սումսկից գաւառում։ Դիմիտրիյ Սիսենկո ազգանունով մէկ մարդ քառատարում է իւր վեց տարեկան աղջկան և նրան նպատակով այդ հրեշաւոր հայրը դնում է իւր մեւս 14 տարեկան աղջկան, բայց վերջինս ընդդիմադրելով նրա զզուելի վարմունքին, կատաղած Սիսենկօն ատելի էլ զայրանալով իւր կնոջ յանդիմանութիւնից, մեռցնում է ամբողջ ընտանիքին՝ կնոջ, չորեակ երկու աղջկերանց և երկու փոքրիկ տղաներին։ Այդպիսով ընտանիքի հայրը բացի իւր աղջկերանց անպատուելուց մարդասպան էլ է հանդիսանում հինգ հոգիներից բազկացած մէկ ընտանիքի։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ լրագիրները պատմում են, որ մայիսի 9-ին Պետերբուրգում սարսափելի փոթորիկ է եղել, որը քանդել է շատ շինութիւնների տանիքները և շատ մարգկանց էլ վնասել է։ Փոթորիկը արևելեան կողմից է եղել։ Ֆինլանդիայում մեծ վնասներ է պատճառել։ Ֆիննեան ծոցի և Բալտիկ ծովի վրայ հինօրեայ շատ նաւակները խորտակուել է շատ մարդկիներով, իսկ շոգենաւերը կարելով խարխլանոցից շատերը ջախջախել է։ Նոյն վտանգին են ենթարկուել և նեվայի վրայ գտնուող նաւերը։ Փոթորիկը տևել է կէս ժամ այնպիսի ոյժով, որի նմանը բազմամեայ դիտողութիւնները չեն յիշում երբեք ամբողջ կեանքում։

—

«С. Пет. Вѣд.» լրագրի ասելով այս տարի Նիժնի-Նովգորոդում բացուելու է արդիւնաբերական և գիւղատնտեսական աշխարհահանդէս, որի համար նշանակուած են մրցանակներ՝ ոսկէ և արծաթեայ մէդալներ։

—

ՇՈՒՇՈՒԻՑ։—Ամսիս 13-ին գատաւոր Դ. գիւղում՝ 22 տարեկան մէկ երիտասարդ հարս, վերցնելով իւր հինգ ամսական երեխային և գնալով գիւղից դուրս՝ մէկ բարձր ժայռից երեխայի հետ միասին գլորվում է ցած և նրա հետ միասին իսկոյն հոգին աւանդում։ Այդ անցքը տեսնող մէկ մանկահասակ աղջիկ իսկոյն վազում է գիւղը և լմաց է տալիս, բայց գիւղացիները երկուսին էլ արդէն մեռած են գտնում։ Հարսը հարուստ տնից է և դեռ ևս յայտնի չէ նրա այդ անձնասպանութեան պատճառը

Ամսիս 16-ին կէսօրից յետոյ այստեղ սաստիկ կարկուտ եկաւ, որը մեծ վնասներ հասցրեց թէ արտերին և թէ ծառերին։

—

«Новое Время» լրագիրը լսել է, որ 1886 թ. յունվարի 1-ից դեղագործական բոլոր հիմնարկութիւնների մէջ կը մտցնուի դեղերի նոր սակագինը (такса)։

—

«Моск. Вѣд.» պատմում է, որ մայիսի 8-ին Վէկշերեզից Մոսկվա հասան 300 էշեր, որոնք և չուտով ուղևորուեցան Կովկաս՝ բնակութիւն հաստատելու համար։

—

Չիմպիլ անուն հրէայ օրիորդ մը, որ քանի մը շաբաթէ ի վեր ազգային Պատրիարքարան կ'երթեւեկէր խնդրելով որ Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկն ընդունուի, երէկ վերստին Պատրիարքարան ներկայանալով պնդեց իւր որոշման վրայ։ Օրիորդին ծնողքն ու ազգականները, որք ներկայ էին ի Պատրիարքարան, շատ ջանքեր ըրին իւր այս որոշումէն ետ կեցնելու համար զինքն, սակայն օրիորդն մինչև վերջը անհամոզելի մնալով, յառաջիկայ երկուշաբթի օրը Փէհլիվանեան Տ. Խորէն և Սէթեան Տ. Կարապետ քահանայից մէջտեղ հրէից Բարուխասիտին պիտի ղրկուի ի Քուզկունճուղ, այս մասին հարկ եղած պաշտօնական գործողութիւնները լրացնելու համար։

(Հայրենիք)

—

Ռուսաց գաղթականութեան և վճառականութեան ընդարձակելու պատճառով արևելեան Ասիայում, վճռուած է, ինչպես հաղորդում է «Русскій Курьеръ»-ը, չատացնել հեւպատոսների թիւը։ Իբրև „ընդունակները այդ պաշտօնավարութեան է նկատի են առնուած նաւատորմի սպաները։

—

«Русскій Курьеръ» լրագիրը հաղորդում է, որ ներկայ տարուայ սեպտեմբեր ամսին Հռովմում կայանալու բանտային միջազգային ժողովին մասնակցելու՝ Ռուսիայի կողմից նշանակուած է բանտային վարչութեան գլխաւոր կառավարիչ ալ Գայկին վրաստանի, որը իր հետ իր տանէ ժողովին ներկայացնելու Պետերբուրգում նոր շինուող բանտի յատակագիծը և նրա վերմագրական նկարը։

—

ՎԱՐՇԱՒԱՑԻ լրագիրները ասելով նկատմամբ այնտեղ գտնվում է ամբողջ Եւրոպային յայտնի լողնորդ անգլիացի Ջօն Լիմբ, որը շուտով կ'ուղևորուի Պետերբուրգ։ Նա նպատակ ունի Նեվայ գետի վրայ բարմութեան ներկայութեամբ կատարել մի փորձ իւր նոր հնարած միջոցով, որով կարելի է երկար ժամանակ ջրի տակ մնալ առանց այդ նոր հնարած միջոցով կարող է լողալ և ամէն մի մարդ, որը բոլորովին լողալ չը գիտէ։

—

«Кавказъ» լրագիրը լսել է, որ բարձրագոյն կառավարութիւնը վճռել է 8,000 ր. տալ անցեալ տարուայ հիղեղից վնասուած Նգուլիսի վերաշնորոգութեան գործի օգտին։

—

«Каспій» լրագիրը հաղորդում է, որ Սարուխիում ծառայող 40 տարեկան մէկ մարդ պ. Բ. ազգանունով բռնաբարել է իւր հօրը տարեկան աղջկան, որի կեանքը չնորհիւ իւր հօր հրէշաւոր անգթութեան, վտանգի մէջ է գտնվում։

—

„Южанинъ“ լրագիրը պատմում է որ այս օրերս Կրիմինչգում մէկ կինը ծնեց մեռած երեխայ, որը մի հրէշաւոր տեսք է ներկայացնում։ Նրա երեսի մէկ կողմը գտնվում է մի մեծ աչք, իսկ միւս կողմը ականջ՝ չան նման։ Ականջի մօտ գտնվում է մի ինչ որ բացուածք—երևի բերան։ Ձեռքերից մէկը փոքր է չատ է բնական է, բայց միւսը բոլորովին նման է չանթաթին, որի ծայրին հոխանակ մատների մի ինչ որ փնջաձև մաս ունի։ Հրէշաւոր որը պատահմամբ քեզ այնտեղ տեսել է, բայց դու այնպէս ընկղմուած ես եղել քո մտածողութեան մէջ, որ նրան չես տեսել։

—Այո՛, ես մի այնպիսի գժուար գբոսութեան մէջ եմ, որ յուսահատւում եմ բոլորովին, խօսեց Անկան նորը հառաչելով։

—Բացուելը լնձ մօտ, Թեոֆիլացու՛ սիրտ, ասա—ինչն է քեզ այդպէս տրտըտեցնում։ Ձմարիտ, ես չեմ հասկանում՝ թէ ինչպէս կարելի է սիրահարուած լինել և միևնոյն ժամանակ տխուր։ Մի՞թէ դու փոխադարձութեան վերայ յոյս չունիս։

—Օ՜, ընդհակառակը։

—Դէհ, էլ ինչո՞ւ դու այդպէս տրտուր ես։

—Որովհետև այդ փոխադարձութիւնը լնձ սարսափելի պայմաններ է առաջարկում։

—Աւելորդ է քեզ թէ կասել, բարեկամ, Լինին այդ պայմանները ամենասարսափելի, դու դրանց կը կատարես, ինչպէս համարձակ ասպետ Ամարօղս։ Իսկ ես, զո հաւատարիմ ընկերը, քեզ կ'օգնեմ, թէկուզ լնձ դրա համար հարկաւորուէր, կատաղի Լօլանդի նման, կռուիլ վիթխարիների և ուրիշ հրէշների դէմ, ինչպէս որ դրա մասին պատմում է Արիոստոն Ֆերրարից իւր գրքի մէջ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐՍԵԴԵՍ

(Պատմական զրոյց Վ. Ֆերրէի)

—

1520 Թուի յունիսի 28-ին սպանիական Կարլոս երիտասարդ Թագաւորը Ֆրանկֆուրտում Գերմանիայի կայսր հրատարակուեցաւ հոկտեմբերի 23-ին, Ախենում նրա Թագադրութիւնը կատարուեցաւ։ Այնտեղից նա, կուրֆիւրստների, կայսերական եշխանների, եպիսկոպոսների և ուրիշ բարձրաստիճան անձնաւորութեանց ուղղակցութեամբ գնաց Վօրմս, որտեղ բացեց առաջին բէխստագը, որից յետոյ կայսրը, Նիդերլանդիայի և Անգլիայի վերայով, վերադարձաւ Սպանիա—Վալիադոլիդ, Կաստելիայում, այն ժամանակուայ սպանիական Թագաւորանիստ քաղաքը։

Այնտեղ նրան սպասում էր ազնուականների մի մասի վտանգաւոր ապստամբութիւնը։ Կարլոսը շուտով վերջ դրեց այդ ապստամբութեան և նրա գլխաւոր Տոլեդոյի քաջ պաշտպանը, դօն Խուան-դէ-Պադիլեան և ուրիշ ազնուականներ Վալիադոլիդի մօտ յաղթութեան յետոյ՝ ընկան Թագաւորական զօրքերի ձեռքը և կայսեր հրամանով բոլորն էլ գլխատուեցան։ Երեսուն տարի Թագաւորը-կայսեր յաղթութեան առիթիւ, Վալիադոլիդում կատարուեցաւ չքեղապարդ տօնախմբութիւնների, նիզակախաղութիւնների և խնջոյքների մի շարք։

Կարլոսի Թիկնապահների Թուում մի մէջն այլոց գանվում էին երկու երիտասարդ արագօնցիներ՝ Պիգրո-Տօրելլի և Իէրօնիմօ Անկա. երկուսն էլ պատկանում էին ազնուականների հին տոհմին և Սարագոսայի բնակիչներ էին. երկուսն էլ, երիտասարդ հասակում, մեծ յոյսեր բաբեկամներ էին միմեանց և յայտնի էին իրենց հաւատարմութեամբ դէպի իրենց մեծ հրամանատարը։

Վալիադոլիդայի տօնախմբութիւններից յետոյ Անկայի մէջ մի ինչ որ անսովոր փոփոխութիւն էր մտել. մինչև այն օր ուրախ և եռանդոտ երիտասարդ—յանկարծ տխուր, լռակաց ու մելամաղձոտ դարձաւ և յայտնապէս խորշում էր ազմկալի ուրախութիւններից, որոնք կատարվում էին իւր շուրջը։ Երբեմն նա ամբողջ օրերով չքանում էր քաղաքից, իսկ երբ նորից յայտնվում էր, այն ժամանակ նա աւելի խորհրդաւոր և ծածկամիտ էր երևում։ Այս բոլորը խիստ էր անհանգստացնում նրա բարեկամ Տօրելլին, որը ձանձրացնում էր Անկային իւր հարցուփորձերով, բայց երկար ժամանակ անօգուտ։

Մի անգամ նա գտաւ նրան մենակ Հանասպարհի վերայ, Պիգուէրգի՝ այսինքն այն գետի եզերին, որը Թավվում է Դուէրօի մէջ, Վալեադոլիդի պարիսպներից մօտիկ։ Իէրօնիմօն մտատանջ Թափառում էր յետ ու առաջ անապատ եզրի վերայ։

—Է՛յ դու, վհատ գիգալգօ, ուրախութիւնամբ կանչեց նրան Տօրելլին,—դու, ասպետ տխուր պատկերի, այժմ ես գիտեմ քո տանջանքների պատճառը, ուրեմն աւելորդ է ծածկել քո բարեկամից, Իէրօնիմօ։

—Դու ինչ գիտես, բարկացած հարցրեց Անկան,—չը լինի՝ Թէ դու լնձ հետամուտ էիր լինում,—երդվում եմ Մադօննայով, որ այդ ասպետին չէր վայելի։ Ես չեմ կամենում, որևէ մարդ հետամուտ լինէր լնձ։

—Մի տագանաք, սիրելիս. մի՞թէ դու վատնեցիր բոլոր ապաւինութիւնդ դէպի քո հաւատարիմ բարեկամը։ Մոռացար —Թէ քանի արկածների մէջ մենք միասին հեռու երկիրներում կատորածները արեցինք։ Կարծեմ, ես իրաւունք ունիմ քո ապաւինութեանդ վերայ։ Ինչո՞ւ դու լնձանից ծածկում ես քո գաղտնիքը։ Դէհ—այնքան հէշտ է բարեկամի մօտ բացուիլը։

—Դու կարծում ես։

—Այո՛, կարծում եմ։ Երկար ժամանակ ես չարչարվում էի քո գաղտնիքը իմանալու, վերջը այն եզրակացութեան հասայ, որ դու, առանց այլ և այլութեան, սիրահարուած ես, բարեկամ, և—լսիստ. դրա մէջ ես չեմ կասկածում և դրանով էլ բացատրվում են քո անսովոր չարժմունքները։

—Իսկ եթէ, ինչպէս դու կարծում, այնպէս լինի։

—Ես ոգով չափ կ'ուրախանայի և կը ցանկանայի քեզ այն բոլոր երջանկութիւնները, որոնց կարող է տալ մարդուս սէրը։

—Իսկ եթէ այդ սէրը լնձ խոստանում է ամենասարսափելի դժբաղդութիւն։

—Ինչպէս. ինչպէս հասկանամ ես այդ։ Դու հանելուկներով ես խօսում.

—Քեզ համար աւելի լաւ կը լինէր ոչ մի ժամանակ չը լսել այդ գաղտնիքը։

—Ո՛չ։ Մեր և մեր ծնողաց բարեկամութեան անգնահատ կնդրում եմ քեզ, որ լնձ բոլորը յայտնես, ինչ քեզ է պատահանում։ Ինչո՞ւ դու այնպէս յանկարծ դուրս ես գնում գէպի Բուրգոսի մեծ Հանապարհը և չքանում ես չգանուելենների անտառում, որի միջով ձգուած է ջրերին մերձ մատչելի չուխը, որը տանում է դէպի Իսնեխլեայ։

—Դու այդ ինչպէս իմացար։

—Լէյլ-գվարդեայի մի կապիտանից,

բեխերի մասին ձայները և մա-
զոտ։

—Ո՛հ, Պետրո, ձեզ էլ ոչ մեծ
ճաշակ է պատվիրել Ձեր ընկե-
րուհին։ Դուք, ինչպես երևում է,
ամենևին չեք սիրում գեղեցիկ
սեռին։

—Ես, տիկին, ձեզ եմ սիրում
ամենից շատ, ինչպես որ ամեն
մի ազնիվ մարդ պետք է սիրի
իր մորը, քրոջը կամ կնոջը։

—Ինչպե՞ս, դուք ամուսնացած
չե՞ք։

—Ոչ, տիկին, ես ամուսնացած
չեմ։

—Ինչո՞ւ։

—Որովհետև ես ոչ մի կնոջ
չեմ սիրում։

—Ինչպե՞ս, ոչ մի կնոջ չեք
սիրում։

—Ոչ, տիկին, ոչ մի կնոջ չեմ
սիրում։

—Ինչո՞ւ։

—Որովհետև ես ուզում եմ,
որ կինս ինձ սիրի միայն։

—Ինչպե՞ս, դուք ուզում եք,
որ ձեր կինը ձեզ միայն սիրի։

—Այո, տիկին, ես ուզում եմ,
որ կինս ինձ միայն սիրի։

—Ինչո՞ւ։

—Որովհետև ես ուզում եմ,
որ կինս ինձ միայն սիրի

Ծանօթութիւն.

Ինչպէս կը տեսնուի, ընդհանուր ծրագրի մէջ ոչ մէկ փոփոխութիւն մտած է. միայն թէ Ռուսական Ընկերութեան ներկայացումները պիտի տեղի ունենան Ազգային Թատրոնի մէջ, որ ներկայիս կը գտնուի Ռուսական Ընկերութեան ձեռքը։

Ընդհանուր ներկայացումներու համար տոմսերը կը ծախուին Ազգային Թատրոնի մէջ, իսկ մասնաւոր ներկայացումներու համար՝ Ռուսական Ընկերութեան մէջ։

սիան ցանկանում է իր գիւանագիտական ներկայացուցիչ ունենալու պատրուակով։ Միջնորդութեան հարցը, ինչպէս երևում է, բոլորովին անհեռանկարային հորիզոնից»։

—

Հաւաստի ազբիւրներից ստացած տեղեկութիւնների հիման վերայ «Central News» լրագիրը հաւատացնում է, որ անգլօ-ռուսական բանակցութիւնների այժմեան դժուարութիւնը կայանում է նրանում թէ ո՛ւմ պիտի ընկնեն Մերուչակը և Զուլֆիկարը։ Ռուսաց կառավարութիւնը ցանկանում է, որ այս կէտը մանի Պէնջէի նահանգի մէջ և մնայ Ռուսիային։ Պատերազմական կուսակցութիւնը աւելի հեռու է գնում, նա բոլորովին հակառակ է, որ Զուլֆիկարը մնայ աւղանցիների ձեռքում, որովհետև սա շատ նշանաւոր ռազմագիտական մի կէտ է։ Լօնդոնում տեղ ունեցած բանակցութիւնների ժամանակ Ստաալը և Լեսսարը հրաժարուեցան բոլորովին Մերուչակից և Զուլֆիկարից, բայց Ռուսիան ձգձգում է վաւերացնելու նրա ներկայացուցիչների արած զիջողութիւնները։ Անգլիական կաբինետը պահանջում է այն գծի վաւերացումն, որը ընդունուած է Լեսսարից և Ստաալից։ Մինչև այժմ ոչինչ չէ յայտնուած Ռուսիային, թէ Հերատը անձեռնմխելի է։

—

Որպէս զի հասկացողութիւն կազմենք քաղաքականութեան այն ներքին արգելքների մասին, որոնց հետ Գլադստոնը պիտի կռուի, հերիք որ ցանկանում է Ռուսիայի հետ վէճը քաղցրութեամբ վերջացնել, դրա համար, ասում է «Nord»-ը, արժէ մի քանի նայել անգլիական պարլամենտի վերին և ստորին պալատի տօրիական կուսակցութեան անդամների ճառախօսութիւնների և յառաջադիմական լրագիրների չօդուածների վերայ։ Այդ բոլոր ճառախօսութիւնները աչքի են ընկնում իրենց անհամբեր ուղղութեամբ և դէպի մինիստրութիւնն ու Ռուսիան ուղղած յերոցներով։ Լօրդ Սալիսբիրիի խօսքի վերայ չը կանգ առնելով, մենք մատնացոյց կանենք լօրդ Զերչիլի ճառը, որի մէջ այս վերջինը մեղադրում է կառավարութեանը նրանով, որ նա „ստոր և վախկոտ“ լինելով, ամենայն կէտերի մէջ զիջողութիւն արաւ։ Մենք յոյս ունինք, որ այդ բուռն յարձակումները Գլադստոնի վերայ ներգործել չեն կարող։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ա յ լ ա ն դ ա կ վ ե ն դ ա ն ի։—Վաշտեան կենդանաբոյժներից մէկը ստացաւ մի նոր ծննդ հորթ, որը ոչ մի ականջ չունէր, բայց հինգ ոտ ունէր։ Հինգերորդ ոտը կպած է ձախ առաջևի ոտից մի փոքր բարձր, բոլոր ոտներից աւելի կարճ։ Այդ հընչային կենդանուն ուզում են խրատուիլակ սպառնասել։

***

Չ ի ն ա կ ա ն ա ն ո ւ ն ն ե ր։ — Մի ֆրանսիական լրագրի ասելով, առաջին անունը, որ փոքրիկ չինացին ստանում է իւր ծննդից չորս շաբաթ յետոյ, առաջին անգամ, երբ նրա գլուխը գերծում են,—դա կաթնային անունն է։ Ճաշակ դրանք միմիայն թուանշաններ են լինում № 1, № 2 և այլն։ Նա այս անունը կրում է մինչև ուսումնարան մտնելը, ուր նրան մի այլ կոչումն են յատկացնում, նայելով նրա մտաւոր որակութեանը կամ աշխատասիրութեանը. օրինակի համար, „Սկսուղ-ծառայութիւններ“, «Դեղեցիկ գրութիւն», «Հրաշալի Թանաք»։ Ապագանունն առաջ է դրվում, իսկ նրանից յետոյ անունը և ապա տիտղոսը։ Աղջիկները պահպանում են իրենց կաթնային անունները, օրինակ՝ «Մաղիկ», «Թանկագին քար» մինչև մանուկը նայը, երբ արդէն այսպիսի կոչումն են ստանում՝ «Ծաղկի ծաղիկ», «Արծաթազօծ լուսին», «Քաղցր բութմունք» և այլն։ Բայց նշանագրութեան ժամանակ սկզբում նրանց մարդու ազգանունովն են կանչում, իսկ յետոյ հօր. ինչպէս մենք ասում ենք տիկին Ա., Տնուած Բ.։ Մարդը վին ուզելու ժամանակ մի երջանիկ անուն ևս ստանում է, որը մնում է մինչև այնժամանակ, մինչև որ ծառայութիւն մըտնելով չորրորդը ձեռք չը բերէ։ Վաճառականները առևտուրին յատուկ՝ հինգերորդ կոչման ևս արժանանում են, վերջապէս ամենավերջին անունն ստանում են մահուան ժամանակ։

***

Թ է Ը ն չ պ է ս Ն ի ա գ ա բ ա յ է ջ ը ը ն կ ե ց ի ո յ ժ ը է լ է ք տ ր ա կ ա ն ո ւ թ ե ա ն փ ո խ ա ո ւ ե ց ա ւ։ — Վիլլիամ Տօմսօնը արդէն վաղուց էր առաջարկում Միացեալ Նահանգների կառավարութեանը օգտուել Նիագարի ջրընկեցի. ջրային ոյժից էլէքտրականութիւն ստանալու իրը շարժիչ ոյժ։ Այդ նախագիծը ներկայ ժամանակումս իրագործուած է մի դինամիտո-էլեքտրական մեքենայ, որ 3,000 ոյժ ունի, դրուած է Նիագարեան ջրընկեցի ափի վերայ։

***

Մ ա հ կ ա տ ո ւ ի կ ծ ա ծ ը։—Փարիզից հաղորդում են մի սարսափելի դէպքի մասին։ Տիկին Եղիսաբէթ Կոլլէյ, Րիվոլի փողոցի վերայ բնակուող մի նշանաւոր վաճառականի կին, մայիսի 6-ին խաղում է լինում իւր կատուի հետ, որը յանկարծ ընկնում է երիտասարդ կնոջ վզին և այնպէս կծում է նրա վզից, որ կինը սրանից մեռնում է։

***

Նորերումս լոյս տեսաւ գրաքի Պիբմեգրի մի շատ հետաքրքրական գիրք, «Folk-Loze» վերնագրով կամ ուրիշ խօսքերով գիտութիւն ժողովրդական աւանդութիւնների մասին։ Այս գիտութիւնը բոլորովին նոր է, բայց նա անկասկած ապագայում մի պատկառելի տեղ կը բռնէ գրականութեան պատմութեան մէջ։ Դիրքը գրուած է լեհերէն ֆրանսերէն լեզուով և կարդացվում է մեծ հետաքրքրութեամբ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ,
17 Մայիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նոցին Կայսերական Մեծութիւնները Թագաժառանգով և Օգոստափառ զաւակներով բարեհաճեցին տեղափոխուիլ Գատչինոյից Պետերդոֆ։

Արտաքին գործոց մինիստրութեան մէջ ծառայող սպայների համար հիմնուած արևելեան լեզուների դասընթացքին վերաբերեալ կանոնադրութիւնը հաստատուեցաւ և հրատարակուեցաւ։ Այս կանոնադրութիւնը գործ է դրվելու այս տարուայ սեպտեմբերի 1-ից։

Լրագիրները ասում են, որ պետական խորհրդին ներկայացրած է և կը քննուի արձակուրդներից առաջ գրաֆ Պալէնի յանձնաժողովից մշակուած նախագիծը, որ վերաբերվում է գիմնազիական դասընթացը վերջացնող հրէաների համալսարան ընդունուելու կանոններին։

ՄՈՍԿՈՒԱ. Երեկ տեղի ունեցաւ արհեստագիտական աշխարհանդէսի հանդիսաւոր բացումն։ Հանդէսը բացուեց, երբ արհեստաւորաց զանազան դասեր ճանապարհ ընկան արհեստաւորաց վարչութիւնից դէպի Խոտինսկի դաշտը, որտեղ է աշխարհահանդէսը. մաղթանքից յետոյ պատկներ դրուեցան աշխարհահանդէսի շքեղ նախասենեակներում զետեղուած Թագաւոր Կայսեր, Թագուհու Կայսրուհու և Կայսրուհի Եկատերինէ II-ի կիսարձանների պատուանդաններին։ Իշխան Դոլգօրուկովը յայտարարեց աշխարհանդէսը բացած և մի ճառ խօսաց, որի մէջ համակրանքով է խօսում ռուսական արհեստի մասին, որ նոր սկսել է մրցել արտասահմանեան արհեստի հետ։ Աշխարհանդէսի այցելութիւնը վերջանուց յետոյ նախաճաշիկ էր պատրաստած, որի միջոցին կենացներ առաջարկուեցան Թագաւոր Կայսեր, Թագուհի Կայսրուհու, Թագաժառանգի, ներքին գործոց և ֆինանսների մինիստրների և ուրիշ անձանց համար.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ
Երէկ ամսական պրամաթէէրը։
17 Մայիսի.

Լօնդօն $24^5/_{16}$ և $24^7/_{16}$
Համբուրգ $207^1/_2$ և 208
Փարիզ 257 և 258 „ —
Պօլուիմպերիալ 8 ր. 10 կ. սակ.
Մաքս. կտրոնները
(կուպոն) . 8 » 9 » սակ.
Յրծաթ . . . 1 » 30 » »
Բօրսային դիս. 6 և 7
Պետակ. բանկի 5 տոմսե ր.
1-ին շրջանի 98 ր. 37 կ. գն.
2-րդ » . 97 ր. 62 կ. սակ.
3-րդ » . . $97^1/_2$ » գն.
4-րդ » . 97 ր. 62 կ. սակ.
5-րդ » . . 97 ր. 62 „ »
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի. 94 ր. 62 կ. սակ.
2-րդ » . .$94^3/_4$ ր. „
3-րդ » . . .$94^3/_4$ ր. » „
Տար. գում. 1-ին փոխ. 5%
տոմսեր . . .$224^3/_4$ ր. » »
» » 2-րդ 209 ր. » »
$5^1/_2$/ բենտեր . 102 » գն.
Ոսկէ բենտը . . 169 » սակ.
Նոր կոնսոլ փոխ. 143 ր. — գն.

18 Մայիսի.

ԱՄՍՏԵՐԴԱՄ. Հոլանդական բանկը իջեցրեց դիսկոնտը 3-ից մինչև $2^1/_2$ %։

ԼՕՆԴՕՆ. Գիտակ շրջաններում խօսում են, որ բանակցութիւնները Ռուսիայի և Անգլիայի մէջ կը վերջանան աւելի վաղ, քան կարծում էին և որ տարաձայնութիւնները վերջացած են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մինիստրների մասնաժողովի նախագահ Բէյտերն աչքերի հիւանդութիւնից առողջանալուց յետոյ, նորից սկսեց իւր պաշտօնը վարել։

Տագանրոգի գործի առթիւ Սենատին ներկայացրած վճռաջինջ բողոքները կը քննուին, ինչպէս ասում են, մինչև արձակուրդները։

ԲԵՐԼԻՆ. Այստեղ ժամանեց Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնա Ամստերդամ գնալով։

«Nord.-Deuts.-Alg.-Zeit.» լրագիրը մերժում է «Times»-ի հաղորդած տեղեկութիւնը լորդ Ռոզբերրիի ունեցած խօսակցութեան մասին իշխան Բիսմարկի հետ, որի միջոցին Բիսմարկը երբև թէ Անգլիայի համար անբարենպաստ պահանջներ է արել։ Լրագիրը ասում է, որ դրա պատճառը կայանում է նրանում, որ կարելի լինի երկար պահել այն տարաձայնութիւնը, որ գոյութիւն ունի Անգլիայի և Գերմանիայի մէջ։

ՓԱՐԻԶ. Հիւգօյի թաղման ժամանակ արգելուած են խռովեցուցիչ դրօշներն ու համանշանները (էմբլեմ)։

ԲԵԼԳՐԱԴ. Ալբանցիների միքանի աւազակային խմբեր ասպատակութիւն գործեցին սահմանաբնակ սերբական գիւղերի վերայ։

19 Մայիսի.

«Наблюдат.» լրագրին յայտարարուած է երկրորդ նախազգուշութիւն նրա համար, որ նա, չընայելով առաջին նախազգուշութեան, շարունակում է հետևիլ ակնյայտնի դատապարտելի ուղղութեանը։

Ներկայումս Կրօնշտադի մօտ դրօշների տակ կանգնած, լողորդութեան ծրագրից բաց, նաւերը շուտով կը վերջացնեն ծովում լինելու իրենց ժամանակամիջոցը և կը մտնեն նաւահանգիստ, բայց չեն գինաթափ լինիլ, և երևի կը մասնակցեն այն պատերազմական կրթութիւններին, որոնք, ինչպէս ենթադրութիւն կայ, պիտի կայանան Կրօնշտադի մօտ յուլիս ամսում։

20 Մայիսի

ՓԱՐԻԶ. Հիւգօի դիակը երեկ գուբս դրուեցաւ յաղթական կամարակապ դռների տակ. խուռն ամբոխը վաղ առաւօտից անցնում է գագաղակալի մօտից. անկարգութիւններ չեղան։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍԱԱՆԴԱՐ ՍԱԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՍԻՒԼԻԿԻ
„ՏԻԿԻՆ և ՆԱԺԻՇՏ“ վէպը
Գինն է 60 կոպ.
Յանկացողք կարող են դիմել Հրատարակչին հետևեալ հասցէով.
Въ Кизляръ. Ованнесу Арабаліанцу.
3—1

ՆԱԻԱԴՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԿԵՐՈՒԹԻՒՆ։
Նոյեմբերի 1-ից կազմուածգուցակը շոգենաւերի երթևեկութեան համար մի շաբաթայ ընթացքում բաժանուի, Օդեսսայի և Կ. Պօլսի մէջ։
ԲԱԺՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ Է
ՀԻՆԳՇԱԲԹԻօրերը, ժամի 4-ին երեկոյեան, ուղիղ գծով Նովօրօսիսկ և Կերչ քաղաքների վերայ։
ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, ժամի 8-ին երեկոյեան շրջնանական գծով ամէն նաւահանգիստների վերայ։
8 ԿԻՒՐԱԿԻ օրերը, արտասահմանեան գծով դէպի Կ. Պօլիս։
ԳԱԼԻՍ Է ԲԱԹՈՒՄ
ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ, Կէս գիշերին մօտ, Օդեսսայից շրջնանական գծով։
ՈՒՐԲԱԹ օրերը առաւօտեան, Օդեսսայից ուղիղ գծով Կերչի և Նովօրօսիսկ քաղաքների վերայ։
ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, առաւօտեան, Կ. Պօլիս։

Անդրկովկասեան երկաթուղին։
ԴՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍԻ“ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։
Բաթում պոստ. գնում է Ժ. 8—35 րոպ. առ.
Բաթումից „ գալիս է „ 10—25 „ գիշ.
Բագու . . . գնում է „ 10—55 „ գիշ.
Բագուից „ գալիս է „ 8 —„ „ ցեր.
ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ.
Թիֆլիսից ապր.—Ճանապ. գնաց. գնում է . . . . . Ժ. 3—15 „ առ.
Սուրամից . . գալիս է „ 8—24 „ առ.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԴՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն· ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ·

Կիւրակի մայիսի 19-ին հասաւ Բաթում Մեօզ (Meuse) շոգենաւը, նաւապետն է պ. Տիբալ (Thibal). իսկ երեքշաբթի մայիսի 28-ին յետ կը դառնայ Տրապիզոն, Սամսուն, Կ. Պօլիս և Մարսէլլ։
Տեղեկութիւնների համար դիմել ընկ. գործակալներին։ Բաթումում պ. ԴԱՐԱՆԵՕՆԻՆ և Թիֆլիսում պ. ՈՒՆՕԻՆ նախկին Աբդրուշու գալերէյում։
3—1

ԹՂՏԵՆՈՒ ԲԱԼԱՍԱՆ
ԲԺԵ· ԼԵՆԳԻԼԻ

Մուտքը Ռուսիա թոյլատրուած է Ս.-Պետերբուրգի ըժշկական գեպարատամէնտի կողմից։ Շատ կան և կեղծեալներ. ուստի և խնդրում են ուշադրութիւն դարձնել փաթեթի վերայ. սպիտակ կաթնագոյն շիշ, կապսիւլի վերայ աւստրիական նշան (արծիւ). էտիկետի վերայ գործարանի գրաշմը (աղջիկ կուժը ձեռքին թղտենու տակ) և նեղ դրոշմաթուղթը ռսերէն վերնագրով։
Շիշի գինն է 1 ռ. 65 կոպ.։ Օտարաքաղաքացիք աւելացնում են ճանապարհածախս 60 կոպ։
Վաճառվում է Ռուսաստանի բոլոր դեղավաճառանոցներում։
Մ օ ս կ վ ա յ ո ւ մ՝ Ռ. Կելչրի և ընկ. Կ. Ֆերրէյնի, Օ. Դէլինգի, Դ. Բրունսի, Շտոկմանի և Լեմանի, Լիւտերի և Հիրշֆելտի, Ն. Մատէյսենի, Կ. Բեզբարդիսի, Է. Կերստանի և. Բորխարտի և ուրիշների մօտ։
Ս. Պ ե տ ե ր բ ո ւ ր գ ո ւ մ՝ Դեղավաճառ ռուս ընկերութեանում։
Թ ի ֆ լ ի ս ո ւ մ՝ Դեղավաճառ Կովկասեան ընկերութեան խանութում և սրա բաժնում, Բագուում։
12—2 (Ц. 14,385)

Тифлисъ, 20-го Мая 1885 г. Типографія А. А. МихельсонаГол. пр., д., № 12 Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12.